ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02
ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-21/4 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«13» «հուլիսի» 2021թ.,**
ժամը՝ 10:00

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության
տրանսպորտային բաժնի պետ Գարեգին Հակոբյան
Հանձնաժողովի անդամներ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի
տրանսպորտային բաժնի ավագ մասնագետ՝ Գարեգին Անանյան

Վարչապետի աշխատակազմի գործերի
տրանսպորտային բաժնի ավագ մասնագետ՝ Սարգիս Սահակյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների
կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

---

1. «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-21/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով էլեկտրոնային ձևով գնման ընթացակարգի հայտերի վերաբերյալ

1.1 «ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-21/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգով հայտերի ներկայացման վերջնաժամկետը սահմանված է եղել 2021թ. հուլիսի 09-ին ժամը 10:00-ն: Հակադարձ աճուրդը տեղի է ունեցել 2021թ. հուլիսի 12-ին Ժամը 10:00-10:30-ն՝ **eauction.armeps.am** համակարգի միջոցով:

1.2 Հայտ է ներկայացրել հետևյալ կազմակերպությունը.

N	Մասնակցի անվանումը	Հեռախոս	ՀՎՀՀ
1	Հովակ և որդիներ ՍՊԸ	093 955 477	0352874

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

2. Տեղեկատվություն հարցումների և պատասխանների վերաբերյալ

2.1 Հարցումներ չեն կատարվել և պարզաբանումներ չեն ներկայացվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

3. Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտի և հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության վերաբերյալ.

3.1 Մասնակցի կողմից ներկայացված հայտը կազմված է հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3.2 «Հովակ և որդիներ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա է անճշտություն՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում /հավելված 1.1/ առաջարկվող ապրանքը հստակ չի նկարագրված /անհրաժեշտ է բացառել «կամ համարժեք» բառը և հստակ նշել երաշխիքային ժամկետը /:

Ընդունվել է որոշում՝ կողմ- 3, դեմ-0

4. **«ՀՀՎԱ-ԷԱՃԱՊՁԲ-21/4» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի մասին**

Գնահատող հանձնաժողովը որոշեց

4.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետը, հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ աշխատանքային օրով և ծանուցել «Հովակ և որդիներ» ՍՊԸ-ին որպեսզի սահմանված ժամկետում շտկի նշված անհամապատասխանությունները:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Հանձնաժողովին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունը

Հանձնաժողովի Նախագահ՝	Գարեգին Հակոբյան	
Անդամներ՝	Գարեգին Անանյան	
	Սարգիս Սահակյան	
Քարտուղար՝	Սոնա Շիրինյան	